

ՄԱՆՐԱԿԱՐՀՈՒԹԵԱՆ ԵՐՈՒԵՍԸ ՀՅԱՑ ՄԷջ.

(ՀԱՄԱՆ Գ-Ի պատկերի առջիւ)

Մանրանկարչութիւնը (Miniaturmalerie) քրիստոնէական եկեղեցու արուեստի մը ճիշդն է, որ հեթանոսութիւնից առնելով ինքնուրուն կատարելութեան է հասցրել. Հռովմակեցիների մէջ սովորութիւն էր բարձրաստ ճան անծանց ոսկեղիր. ծիրանեղարդ մագաղաթի մատեաններ նուրիբել. ալսպէս երբ Մաքսիմինը դպրոց սկսեց լաճախնլ, իւր ազդական մի տիկնոջ կողմից ընծալ ստացաւ ոսկեղիր և զարդարուած Հոմերոսը. Մանկավարժական մի մեթոդ էր ալդ, երեխաններին զրքի բովանդակութեամբ աւելի հետաքրքրելու.

Քրիստոնէութիւնն ևս իւրացնելով այս արուեստը՝ նպատակ է ունեցել մասամբ ս. Գիրքը վայելուչ կերպով զարդարելու և մասամբ բովանդակութիւնը ընթերցողներին մատչելի անելու. տական առաջին հանգամանքը միշտ գերակշռող նըշանակութիւն է ունեցել, ուստի և քրիստոնէութեան սիրելի արուեստներից մէկը դարձել. Քրիստոնէական մանրանկարչութեան ամենահին լիշտավարանները ծագել են. Դ. դարում, ինչպէս 354 թ. գրուած օրացոլը և Վէհնալի կալսերական մատենադարանի ծննդոց դիրքը 48 պատկերով. Սրկուան էլ հրատարակել է Գրացի համալսարանի ուսուցչապետ Ստչիգովսկի (Stzygowskij), այն դիտնականը, որ մը լատուկ մնագրութիւն է գրել Մալը Աթոռի մատենադարանի փղոսկրեալ աւետարանի և ընդհանրասկէս հալրց մանրանկարչութեան մասին. Ավելուետե իրենց հնութեամբ և արուեստով նշանաւոր են և ոտոնի Աստուածաշունչը, Վատիկանում գտնուած Եթովի գրքի փաթեթը, Բաբուլալի աւետարանը 7 մեծ պատկերով. և ուրիշ մանրանկարդերով, Տօքեք Rossanensis Գերարտի և Հարնակի հրատարակութեամբ, որ պատկերների բազմազանութեամբ ամենից հարուսան է. Յաշեալ ձեւագրերը բուօրն էլ Ս.—Զ. զարու զործ են համարւում, Բարուլավինը ասորական, իսկ Տօքեք Rossanensis-ը հգիստական ծագումով. Սոցա վերապէտք է աւելացնել նաև Մալը Աթոռի փղոսկրեալ աւետարանի մի քանի մանրանկարները, որ ըստ Ստչիգովսկու ասորական ծագումն ունին և Ս.—Զ. զարու արդիւնք են.

Բայց քրիստոնէական մանրանկարչութիւնը, բարձրագուն կատարելու թեան է հասել Բիւղանդիալում Թ.—ԺԱ. դարում, և ըստ հակական (մակեդոնական) հարստութիւնն էր իշխում Ալ Հարստութեան ժամանակ ոչ մի միայն բիւղանդական պետութիւնը վերակենդանացաւ քաղաքականապէս, ալլ և գիտութիւնը, գրականութիւնն ու արուեստը հասաւ կատարելագոյն զարգացման. կալսրներից շատեր հօվանաւորում էին գիտութիւնն ու արուեստը, իսկ ոմանք էլ անձամբ մասնակցում նորա զարգացմանը. Կոստանդին Զ. ծիրանածին նկարից էր և ոսկերիչ, Ակապն արուեստներից ամենից աւելի մեծ ուշագրութեան արժանանում է մանրանկարչութիւնը. Փարիզի աղքային մատնեալարանում պահու. ած սաղմոսարանը (Ն: 139) իւր մանրանկարներով, կոնդակովի կարծիքով, բիւղանդական արուեստի կատարելու թիւնն է ներկալացնում, որ Փ. զարու գործ է. Սակայն անուանի հնագիտական արուեստագէտներից ոմանք, ինչպէս կրառուց, Դ. դարու բնագիրներից ընդօրինակութիւնն է համարում ալս սաղմոսարանի նկարները.

Ակապէս մեր նիւթից գործ էր կանգ առնել մանրանկարչութեան պատմ. թեան վերալ, մեր նոյատակն էր ընթերցովին զաղափար տալ ալս արուեստի ծաղման մասին, որ ոչ սակաս կառարելութեան է հասել նաև Հալոց մէջ. Համերը գրացի լինելով Բիւղանդացիներին իւրացուլին նրանց քաղաքակրթութեան ալլ և ալլ կողմերը. ի միջի ալլոց և մանրանկարչ. արուեստը. Տարարադաբար արուեստի ուսունելու ճիշդը համարեա Երես incognita է մեացել հայ բանասէրների համար այն հասկանալի պատճառով, որ մ. ծ ճախս է պահանջում ալդ արուեստի մնացորդների նոյնատիպ, գունաւոր հրատարակումիւնը. Սակայն ալդ մ. անհամեշաց գործ է, որ չպէտք է վրիպէ հայ ժողովրդի հոգեոր քաղաքակրթական կեանքի, դիտութեան և արուեստի վերակենդանութեան և բարգաւաճման բարեկամ մնձատունների աքից. Հայ ժողովրդի և նորա եկեղեցու մէջ թմրել է ալֆմ նախնեաց ստեղծագործող ոգին, սակայն նորից վերակենդանաց և կարելի է այն, եթէ հին արուեստը ուսումնասիրենք, մատչելի դարձնենք կրթուած հասարակութեան և հետեւնք եկեղեցների շնութեան կամ վերանորոգութեան ժամանակ. Մեր եկեղեցու ինքնուրոյնութիւնն ու անկախութիւնը պէտք է արտավայում նաև իւր ճարտարապետութեան և ընդհանրապէս արուեստի մէջ,

Ե՞րբ է սկսուած մանրանկարչութիւնը Հալոց մէջ. Դըժուար է զրական պատասխան տալ. Մեր ձեռքը Յ. — Լ. դարու ձեռագիրներ չեն հասել, որպէս զի ըստ ալնմ զատել կարողանակինք. վերջերս միայն աշանդէս Ամսօրեալին. մէջ (1 01 թ. փետր.) Յ. և. Խ. հաստատում էր, որ Երուաղեմի մատենադարանի ձեռագրներից մէկը է. դարու գործ է, *) բայց

*) Ձեռագրի լիշտակարանը հետեւալն է. «ՀԱՅ. Թուա-

տարաբաղդարար լողուածագիրը տեղեկութիւն չէ տալիս, մանրանկարներ կան ձեռազրի մէջ, թէ ոչ Լազարեան ճեմարանի աւետարանը, որ հալրց հնագոյն ձևագրներից մէկն է՝ 887 թ. զրուած, մանրանկար չունի: Խակ Փ. գորու մեր տեսած ձեռագրերի մանրանկարները թէ զաւառնելու մէկ թէ Մալր Աթոռի մատենազարանում, մեծ մասով կոսով են և դուրկ դեղաբուստական նշանակութիւնից, բացառութեամբ փղոսկրեալ աւետարանի, որը հնագոյն սորուկան ծաղում ունեցող պատկերներից զատ՝ բաւական հաշակով մանրազարդեր և ունի, անչուշտ հալ զրի գործ: Ալս հանդամանքներն ի նկատի ունենալով, կարծես ճշգրում է ուսւցչապետ Ստչիդովսկու ալն կարծիքը, թէ Հալաստանում մինչև Ժ. Ա. դարը մանրանկարչական արուեստը չէ զարգ ցել:

Սակայն դժուար է առանց ալլ և ալլութեան համակերպութիւնը ալս կարծեաց հետ: Զ. զարից սկսած Հալերը ամենասերտ տարաբերութիւն ունէին բիւզանդացիների հետ մինչև Արաբացիների կատարեալ տիրապետութիւնը. բիւզանդական քաղաքակրթութեան ազդեցութեան լաւդուն ապացուցը կարող է Զուարթնոց եկեղեցու բիւզանդական ոճով շինութիւնը համարուել: Տ. Խաչիկ վարդապետի շնորհիւ աւերակների տակից հանուած քանդակներն ու զարդարանքներ, սիւների մասցորդներն ու խոլակները ցոլց են տալիս, որ ալդ եկեղեցին համրակների ձեռ քով չէ կառուցուած, ալլ արուեստի մասին համակացողութիւն և ճաշակ ունեցող անձանց ձեռքով: Ե. դարում և շինուած նորնպէս Թալիինի մեծ եկեղեցին. նորն դարում նաև Հռիփոսիմեսանց գողարիկ տաճարը կոմիտաս կաթողիկոսի ձեռքով, Կարելի է ենթադրել, որ Հալերը Բիւզանդական ճարտարավետութիւնն ու քանդակագործութիւնը, նորն իսկ մոգալիկի արուեստը *) խրացնելուց լետով՝ միանգամայն անծանօթ մնալին մանրանկարչական արուեստի հետ: Բացարեկ ալս հանդամանքը պատկերամարտների շարժմամբ, ուրին համակիր էր հալ կուսակցութիւնը Բիւզանդիալում, դժուար է: Աւելի հաւանական է, որ ալդպիսի ձեռագրերը ոչնչացել են, ինչպէս ոչնչացել են և ալմէմ չատ հաղուագիտ են Բագրատունեաց : Եղջանի ձեռագրերը, Փ. դարից մասցած միերկու ձեռագրի կոպիտ մանրանկարչութիւնը մեղ համար համոցեցուցիչ ապացուց: Ե. որ մինչեւ ալդ ժամանակ Հալաստանում ալդ արուեստը չէ ծաղկել: Ալս առարկութիւնը մէջ բերելով, ինք կամենում պնդել, թէ մանրանկարչութիւնը Հալրց մէջ անպատճառ աւելի վաղ է սկսուել և զարգացման հասել: զրական կարծիք լալտնելու համար հարկաւոր են աւելի փաստեր, քան ոնինք մինչեւ ալմէմ:

կան ԾԱ. ԶՃԲ. զրեցաւ լԱւձի լաւուրս Մուշեղի. Գրիգոր եռէցէ»:

*) Զուարթնոց եկեղեցու աւերակների մէջ զտնուած:

Սակալն ԺԱ. զարու կէսերից արդէն ընտիր մանրանկարներ ունինք, թէև տարաբաղդաբար ոչ բազմաթիւ Ավր Աթոռի մատենաղարանի ձեռագրերից մէկը՝ որ գրուած է 1066 թ. բիւղանդական արուեստի կատարելութեամբ մանրանկարներ ունինք, տարաբաղդաբար մը քանիսը գողացուած կամ տըգիտութեամբ պոկո ած։ Այս աւետարանը սեպհականութիւն է եղել Ներսէս Շնորհալու, Գրիգոր տղափի և Հռովմկլալի ուրիշ հալրապետների և իւր լատուկ պատմութիւնն ունի, որի մասին լուսով ենք, առիթ կունենա՞նք մի անդամ գրելու։ Գոյցէ ԺԱ. դարու դործ լինի Գրիգորիս կաթողիկոսի սեպհականութիւննեղած Գրիգոր աստուածաբանի ճառերի ժողովածուն, ընտիր



միջին երկաթագրով և մանրապարդերով, ենթադրութեամբ եւք ասում, որովհետև հաստատուն թուական չունի ձեռագիրը, ալ մը քանի տեղ լիշտում ստացողի ՀԿրիգորէս կաթողիկոսի անունը։ Կան և առանց լիշտակարանի ձեռագրեր Ժ. – ԺԱ. զարու, բայց արդպիսիները ի նկատի չունինք։ Մեծն Հալաստանի հնագոյն ձեռագիրները շատ սակաւաթիւ են, որոնց մէջ պէտք է լիշել Խաչենու Վախթանգ թագաւորի և նորա թագուհու Խորիչանի աւետարանը, Թարգմանչաց վանքի աւետարանը, Սպասաւարների մնձ իշխաններից մէկի աւետարանը, ամենքն էլ թանգագին և կարենոր մանրանկարչական արուեստի պատմութեան ուսումնակիրութեան համար։

Մանրանկարչական արուեստի և հայ զրչութեան ծաղկման սկիեղաբը պիտի համարել Ժ. զարու վերջերից մինչեւ

ԺԴ. սկիզբը. Լեռն Բ.ի Հեթում Ա.ի, Լեռն Գ.ի և նորա որդի՝
Հեթում Բ.ի ժամանակ Կիլիկիալում ծաղկում է մի այնպիսի
զրչութիւն ու արտեստ, որ մրցել կարող էր ժամանակակից.
բոլոր ազգերի նույն Կարդի արուեստների հետ. Հալերը սերտ-
լարս բ'րութիւն ունէին ոչ մ այն Խաչակիրների, այլ և Քիւ-
զանդացիների հետ. Հալոց Թագաւորներն ու թագաւորադուն-
ները ոչ միայն արուեստի և գիտութեան հովանաւոր էին հան-
դիսանում, այլ և իրենք անձամբ մասնակցում են ժամանակի-
գիտութեան և արուեստի զարգացման. Այս ժամանակին են
վերաբերում մեր դրչագրերի ամենից ազնիւ սեսակները. Հաջ
Թագաւորներն ու իշխանները, Կաթողիկոսներն ու եպիսկո-
պոսները բարեպաշտական զգացմ. և քից դրդուած մեծածախս-
ձեռադիրներ են պատրաստել տալիս աս կամ այն վանքին
կամ անձնաւորութեան նուիրելու կամ անձնական գործածու-
թեան համար. Զիվելով Պետրոս գետաղարձի, Խաչենոյ Վախ-
թանգ Թագաւորի և արոց սեպհականութիւն նղած ձեռագր-
բերը, Ռուբինեանց շրջանի լաւագոյն արտադրութիւններն են
Ներսէս Լամբրոնացու նարեկը սքանչելի փոքր երկաթագրով և
մանրանկարներով զարգարուած, Պակոր Կլալեցի կաթողիկոսի
Աստուածաշունչը ստոցով պատկերով, (Եռն Գ.ի գեղահրաշ-
ճացոցը, Հեթում մ.թ.ի և Խոսի Խչցու Աստուածաշունչները, Յով-
հաննէս Երշնկացու ընտիր դրչութեամբ և ման, անկարներով՝
ու ծաղկագրերով, Վարդան պատմագրի աւետարանը, Յովհան-
նէս արքալեզրօր պատրաստած ձեռալզերը զարձեալ ման-
րանկարներով զարդարուած, որոնք Մալր Աթոռի մատենագա-
րանի զարդն են կազմում և հայ դրչութեան ու արտեստի-
լաւագոյն արտադրութիւնները, Լիլիկիալի վանքերից սկսուած-
շարժումը անցնում է մեծն Հալաստանի Երշնկացից մ.ինչն Տա-
թե, ուր ոչ պակաս կատարելութեամբ ձեռագրեր կան զը-
րուած.

Այսուհետեւ առժամանակեալ թմրութիւնից լսաու ԺԶ-
դարու վերջերից հայ դրչութիւնն ու մանրանկարչութիւնը նո-
րից վերակենդանանում է Եջմիածնի Կաթողիկոսների շնորհիւ-
լազար և Նահապետ կաթողիկոսների անուննելը հայ արուեստի
պատմութեան մ.ջ շատ պատուաւոր տեղ պիտի դրաւեն. Այս-
վերջին շրջանի արուեստը աելի արեելեան պարսկական ընաւո-
րութիւն ունի. Մի առաջ ճին գլուխ կարող է կազմել եւրո-
պական ազդեցութեան երթարկուած մանրանկարչութիւնը,
զլմաւորապէս լեհաւալոց մ.ջ. Առանց գրքերի, լիշողութիւնից
զրուած այս մի քանի թռուցիկ նկատողութիւններով մեր նը-
պատակն էր ընթերցողի առաջ դնել այն ընդարձակ ասպա-
րէզը, որ կարօտ է ուսումնակրութեան և որի հետ կապուած է
մեր նախնեաց փառքն ու եկեղեցու զիտակցական լառաշա-
ղիմութիւնը. Մալր Աթոռից պէտք է սպասել հոգեոր կեանքի-
և քաղաքակրթութեան ալս նոր արշալուած, եթէ հայ ժողո-
վորոց իւր սիրով ոռոգել կամենալ այն անդաստանը, որը

ունակութիւն ունի ալդ մտքով պաղաքեր լինելու,

Հետաքրքրական է և կարեոր նշանակութիւն ունի այն հանգամանքը, որ մանրանկարչութեան սովորական մոտիւներից զատ, որ ս. դրքի բովանդակութեան են վերաբերում, երբեմն հանդիպում անք պատմական անձնաւորութեանց կամ եղելութեանց պատկերների, Մալր Աթոռի մատենադարանում պատմագրերի (Խորենացու և ալլոց) մի ժաղովածու կաէ, եթէ չեմ սիամում ԺԶ. դարու գործ, զորդարուած բովանդակութեան համեմատ պատկերներով. Սական պատմական անձնաւորութեանց պատկերներ ունինք աւելի վաղ ժամանակներից. Գրիգոր Նարեկացու պատկերն ունինք Լամբրոնացու նարեկի մէջ, Ներսէս Շնորհալու պատկերն ունինք մի ժամագրքի մէջ, որի թուակ ուն ու գրիչը չեմ լիշում. Հանգուցեալ Ալիշանը իւր Սիսուանի մէջ զետեղել է Լեռն Գ-ի պատկերը (եր. 481). Ժամանակակից նկարիչ Սարգիս Պիծակի գործ, իսկ եր. 235 նոյն իսկ նկարչի՝ Սարգիս Պիծակի պատկերը. Սական հազուագիւած չեն պատմական անձնաւորութեանց նկարները մեր գրչագրերի մէջ. մեզ լալտնի են թագաւորներից Հեթումի, Յահորբ Կյալեցու, Լոսակի Նչեցու, Նդիազար և Նահապետ կաթողիկոսների պատկերները, բոլորն էլ ժամանակակից նրակարիչների գործ. Սոցա թաւին է պատկանում և ներկայ պատկերը, որ Լեռն Գ ինն է, ինչպէս ընթերցողը համոզուել կարող է հետեւել տողերից:

Մագաղամիեալ սոյն երկթերթը առնուած է մի գրչեալ աւետարանից, որի մասին առաջին անգամ տեղեկութիւն է առուել Սարգիս արքեպիսկոպոս Զալալեան իւր ճանապարհորդութեան Բ. մասի մէջ, եր. 457. Ձեռագիրը ալժմ էլ գանուած է Ն. Նախիջեանի Լուսաւորիչ Ակեղեցու պահարանում: Ինձ լալտնի չէ, թէ Երբ, ում ձեռքով են պոկուած ալս թերթերը և Մալր Աթոռ բերուած: Այս թանգագին պատառիկը ալժմ սրբութեամբ պահպանուած է Մալր Աթոռի Ակեղեցական թանգարանում, բայց ցանկալի էր ամրող ձեռագիրը Մալր Աթոռ Փոխփառակ և պոկուած պատառիկը նորից հաստատել իւր սկզբնական տեղում:

Պատկերի խորանի տակ աջ և ձախ կողմից, ինչպէս ընթերցողն անձամբ ստուգել կարող է, զրուած է Ալեքոն ՈՐԻՒ ՀԵԹՈՒՄ ԹԱԳԻՒ: Իսկ միւս երեսում հետեւել ձօնն է զըրուած ոսկեգոյն գրերով տող առ տող.

Ցն Կոստանդեա կաթողիկոսի

Զաւետարանս ալս ըղձաւի:

Որդոյ Հեթում թագաւորի

Առ ի նշան արքաւութե դատել

Հաս հաւատոյ զաւանութեան

Որ լուղագիտացն Եղեալ սահման

Ի լիշատակ իւր լաւիտեան:

Հեթումի որդի Լեռնը ուրիշ ոչ ոք լինել չէ կարող,

բալց եթէ Լոռն Գ. Ռուբինեանց ամենահամակրելի շըր-
ջանի իշխաններից մէկը, որի ժամանակ գրչութիւնն ու
արտեստը մնձ կատարելու թեան հասաւ Նորա ճաշոցը, որ
գոնուում է Մալր Խթոռի մատենադարանում, գուցէ մանրա-
նկարչական արուեստի ամենից ազնիւ երեսլթը պէտք է հա-
մարել Հալոց մէջ: Հեթում առաջինն էր միայն, որ Լոռն ա-
նունով որդի ունէր, որը գերի ընկաւ Ծփապոսով Սուլթանի
ձեռքը և աղատուելուց լետոյ արքայական գահը բարձրացաւ
նոյն իսկ հօր կենդանութեան ժամանակի Հեթում Բ-ը Կուսա-
կրօն էր և իրեն ժառանգ նշանակեց իւր եղրօրորդի Լոռն
Դիմու Բաղր գորանից Կոստանդին ըստ վիկալութեան Վարդան
պատմչի Հեթումի որդոց՝ Լոռնի և Թորոսի դաստիարակն էր
և ապրեց մինչև Թորոսի մահը և Լոռնի գերութիւնը, որ շատ
ծանր տապարութիւն թողեց ծերունի հաւրապետի վրա: Ա-
ւետարանի վերոլիշեալ ոսկեգիր լիշատակարանն էլ, ինչպէս
ընթերցողը տեսաւ, նորն է հաստատում: Ըստ Ալիշանի*, Կոս-
տանդին կաթողիկոսը բազմաթիւ աւետարաններ է զրել վան-
քերին և եկեղեցիներին, ինչպէս նաև իր սան արքայազուներին
նուիրելու համար: Ալդ ձեռագիրներից մէկն է Ն. Նախիջնա-
նի Լուսաւորիչ Ակնեղցու աւետարանը, որից առնուած է սոյն
պատկերը: Աւետարանն զրուած է Լոռնի գերութիւնից և Կոս-
տանդին կաթողիկոսի մահից՝ արտինքն 1268-ից՝ **) առաջ:
Անդրածեց էր անշուշտ մանրամասն նկարագրել մանրանկա-
րի մեծութիւնը, դոյներն ու զեղարուեստական արժեքը, բալց
առանց ընապրի անկարելի էր ալդ:

ԴԱՐՅԱԳԻՆ ՎԱՐԴԻ. ԵԱՎՍԼԻՓԵՆԱՆ

*) Սիսուան

**) Զամշեան Ա եր. 268